«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԴԵՂՈՐԱՅՔԻ, ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԱՊՁԲ-2020/16-20-5-ԵՊԲՀ»

ք. Երևան «___» «_____» 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ա.Ա. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝Բ.Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ 4 619 500,00/չորս միլիոն վեց հարյուր տասնիննը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Պայմանագրով ամրագրված ապրանքների մատակարարումը Վաճառողը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող /չափաբաժին N76-րդ/ ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ

հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է _18_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	ք.Երևան, Ազատության 26/8
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	<<Էյչ-Էյ-Բի-Սի Հայաստան Բանկ>> ՓԲԸ
հ/հ 11500166513800	ՀՀ217002182558001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 01210095
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	lawyer@c-e.am
	հեռ: +374(11)87-87-17
	Տնօրեն՝Բ.Թադևոսյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:39:17 AMST

SOGHOYAN ANGIN 7209900047

Digitally signed by SOGHOYAN ANGIN 7209900047
DN: c=AM, sn=•••••••, givenName=•••••, serialNumber=aea5c8db7c9, cn=SOGHOYAN ANGIN 7209900047
Date: 2020.09.17 16:23:33 +04'00'

Հավելված N 1
« » 2020թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2020/16-20-5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ապրանքի										
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
12	33691422	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար	Mannitol salt agar Liofilchem	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Փաթեթավորումը՝ 500գ տարաներում: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	կգ	34 000,00	17 000,00	0,5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	0,5	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
15	33691160	Կոլիստինի դիսկ	Colistin sulfate CS 10mg	Կոլիստինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	30,00	**6 000,00**	200	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	200	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
20	33691159	Էլեկսիս Ֆոլեկուլ խթանող հորմոնի	FSH Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Ֆոլեկուլ խթանող հորմոն (ElecsysFSH): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի	հատ	58 000,00	116 000,00	2	ք. Երևան, Աբովյան	2	2020 թվականին՝

		քանակական որոշման թեսթ-հավաքածու		համար: Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն : For In Vitro Diagnostic:					60 և/կամ Մուրացան 114		մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
21	33691159	Էլեկսիս Տեստոստերոն քանակական որոշման թեսթ-հավաքածու	Testosterone Gen.2 Elecsys, cobas e Roche Diagnostics	Տեստոստերոնի որոշման քանակական թեսթ-հավաքածու Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic	հատ	82 000,00	164 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
22	33691162	Էլեկսիս Տեստոստերոն կալիբրատոր	Testosterone CS Gen.2.1 Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Տեստոստերոն կալիբրատոր (Elecsys Testosteron CalSet): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 4x1մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8 C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն : For In Vitro Diagnostic	հատ	31 490,00	31 490,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
23	33691162	Էլեկսիս պրոլակտին հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու	Prolactin Gen.2.1 Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար էլեկսիս պրոլակտին հորմոնի (Elecsys Prolactin) քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Պահպանման պայմանները՝	հատ	61 000,00	183 000,00	3	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	3	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրա

				2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:							տուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
24	33691162	Նեոպլաստին CI Պլուս թեսթ-հավաքածու	NEOPLASTIN CL+5 Diagnostica Stago	Stago ընկերության Start 4 անալիզատորի պրոթրոմբինային ժամանակի որոշման համար նախատեսված թեստ հավաքածու՝ Նեոպլաստին CI Պլուս / Neoplastine CI Plus/: Օրիգինալ: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոզոմետրիկ չափման հիման վրա: Ֆորմատ՝ 6 x 5մլ/հատ, 300 թեստ, եթե թեստավորումը կատարվի Start 4 սարքի վրա օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standart operation procedure) փաստաթուղթը: Neoplastine CI Plus թեստը զգայուն չէ մինչև 1 IU/ml ոչ ֆրակցիոն հեպարինի և մինչև 1.5 IU/ml anti-Xa ցածրմոլեկուլային կշիռ ունեցող հեպարինի նկատմամբ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Մատակարարման պահին պիտանիության ժամկետի 1/2-րդի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար ISO9001, ISO 13485 CE Mark որակի վկայականների առկայություն:	հատ	28 000,00	84 000,00	3	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	3	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
25	33691162	ՊՏՏԱ ժամանակի որոշման թեսթ հավաքածու	PTT AUTOMATE 5 Diagnostica Stago	Stago ընկերության Start 4 անալիզատորի համար նախատեսված ակտիվ պարցյալ թրոմբոպլաստինային ժամանակի (APTT) որոշման թեստ հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշում որոշումը ըստ վիսկոզոմետրիկ չափման հիման վրա: Ծավալը՝ 12 x 5մլ/հատ: Ֆորմատը՝ 1200 թեստ, եթե թեստավորումը կատարվի Start 4 սարքի վրա օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standart operation procedure) փաստաթուղթը: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8 ջերմաստիճանում: Մատակարարման պահին պիտանիության ժամկետի 1/2-րդի առկայություն: For In Vitro Diagnostic only: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար ISO 9001, ISO 13485 CE Mark որակի վկայականների առկայություն:	հատ	130 000,00	260 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
26	33691159	C ռեակտիվ սպիտակուցի LX որոշման թեսթ հավաքածու	CRP LX, 300Test, cobas c, Integra Roche Diagnostics	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար C-ռեակտիվ սպիտակուց (CRP LX, cobas Integra,cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝300 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	145 750,00	291 500,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային

				Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
27	33791300	Կոբաս նմուշի անոթներ	Cobas sample cup 5000pcs Roche Diagnostics	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Կոբաս նմուշի անոթներ (Cobas sample cups): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝5000 անոթ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	45 710,00	45 710,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
28	33691159	Էլեկսիս էստրադիոլ քանակական որոշման թեսթ-հավաքածու	Estradiol III Rack Pack Roche Diagnostics	Էստրադիոլի (Estradiol III) քանակական որոշման թեսթ-հավաքածու Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic:	հատ	60 000,00	120 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
29	33691162	Էլեկսիս էստրադիոլ կալիբրատոր	Estradiol III CalSet Roche Diagnostics	Էլեկսիս էստրադիոլ կալիբրատոր (Elecsys Estradiol CalSet): Օրիգինալ: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Ֆորմատ՝ 4x1մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8 C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic:	հատ	31 490,00	31 490,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝

											20 օրացույցայ ին օրվա ընթացքում
30	33691162	Էլեկսիս Ադրենոկորտիկոտրոպ հորմոնի կալիբրատոր	ACTH CS Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Ադրենոկորտիկոտրոպ հորմոնի կալիբրատոր (Elecsys ACTH CalSet): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 4x1մլ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic:	հատ	31 490,00	31 490,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցայ ին օրվա ընթացքում
31	33691162	Էլեկսիս կորտիզոլի քանակական որոշման թեստ-հավաքածու	Cortisol Roche Diagnostics	Էլեկսիս կորտիզոլի քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	97 450,00	97 450,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցայ ին օրվա ընթացքում
32	33691162	Էլեկսիս կորտիզոլի կալիբրատոր	Cortisol CS Roche Diagnostics	Էլեկսիս կորտիզոլի կալիբրատոր (Elecsys Cortisol CalSet): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորների համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝4x1մլ տուփում/հատ: նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8 C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	31 490,00	31 490,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցայ ին օրվա ընթացքում
33	33691162	Էլեկսիս Ֆերիտին	Ferritin Gen.2 Elecsys, cobas e	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Ֆերիտին (Elecsys Ferritin) քանակական որոշման	հատ	86 000,00	86 000,00	1	ք. Երևան, Աբովյան	1	2020 թվականին՝

		քանակական որոշման թեստ-հավաքածու	Roche Diagnostics	թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում. Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:					60 և/կամ Մուրացան 114		մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
34	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Thyro Ab-ի	PC Thyro AB Gen.2 Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Thyro Ab-ի: Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 4x2մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	82 000,00	82 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
35	33141211	Cobas b 221 անալիզատորի համար սենսորի կոնտակտային էլեկտրոդ	SENSOR CONTACT (SCON) Roche Diagnostics	SCON՝ սենսորի կոնտակտային էլեկտրոդ նախատեսված Cobas b 221 անալիզատորի համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1 հատ էլեկտրոդ. Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 15-25 աստիճան ջերմություն: For In Vitro Diagnostic:	հատ	45 000,00	45 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
36	33691159	C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ կասետ	CRP Gen.3, 250 Tests, cobas c Roche Diagnostics	Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ կասետ (CRP cobas c311): Օրիգինալ: Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության	հատ	153 080,00	1 683 880,00	11	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	11	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրա

				ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							տուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
37	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ մուլտիմարկեր	PreciControl Multimarker Elecsys Roche Diagnostics	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս պրեսիկոնտրոլ Մուլտիմարկեր (Elecsys precicontrol Multimarker) կոնտրոլ: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 6x2մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	99 000,00	297 000,00	3	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	3	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
38	33691162	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված միզաթթվի որոշման թեսթ-կասետ	UA Gen.2, 400Tests, cobas s, Integra Roche Diagnostics	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված միզաթթու որոշման թեսթ-կասետ (Uric Acid cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 400 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	30 950,00	61 900,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
39	33691159	Էլեկսիս Լյուտինացնող հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու	LH Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Լյուտինացնող հորմոն (Elecsys LH): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	55 000,00	110 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ մասնավորապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցայ

											ին օրվա ընթացքում
40	33691159	Լիպազայի որոշման թեստ-հավաքածու	LIPS, 200Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կոբաս ինտեգրա 400+ և Կոբաս ինտեգրա U311 անալիզատորների համար Լիպազայի (Lipase,cobas Integra, cobas c311) որոշման թեսթ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:	հատ	26 310,00	263 100,00	10	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	10	2020 թվականին՝ մասնավոր ապես՝միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
76	31151120	Երաշխավորված էլեկտրասնուցման աղբյուր	Jovytec P 1500 Wartsila JOVYATLAS GmbH	Բժշկական լաբորատոր սարքերի համար նախատեսված երաշխավորված էլեկտրոսնուցման աղբյուր IP21 պաշտպանվածությամբ, դիմային մասում ղեկավարման կոճակներով, սարքավորման աշխատունակությունը արտացոլող էկրան, ավտոմատ դիագնոստիկ համակարգով, հովացման ինտենսիվության ավտոմատ փոփոխման համակարգով և հզորության կոէֆիցիենտի փոփոխման ֆունկցիայով: Հնարավորություն մարտկոցների փոխանակումը կատարել առանց հոսանքի անջատման, ինչպես նաև աշխատել վթարված մարտկոցներով: Հետևյալ ռեժիմների առկայություն՝ Online, Ազատ Գեներացում, Գեներատորային ռեժիմ և էկո-ռեժիմ Մուտքային հոսանքը՝ 100% բեռնվածություն – 168-276 Վ (± 5%) Մուտքային հաճախականություն – 47-53 Հց Մարտկոցները փակ, չսպասարկվող, կապարաթթվային Ելքային հոսանք – 230Վ (հնարավոր է փոփոխել) Ելքային հզորությունը՝ 1500 Վա Ելքային հաճախականությունը որոշվում է ավտոմատ ԱՍՍ-ի կողմից: Նոր, չօգտագործված: Տեղադրումը, կարգավորումները, անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը մատակարարի կողմից: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 12 ամիս: Մատակարարելիս CE, ISO սերտիֆիկատների առկայություն:	հատ	480 000,00	480 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացույցային օրվա ընթացքում

Ընդամենը		4 619, 500,00	

*

1. Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:
2. 1-ից 56-րդ չափաբաժիններում՝ եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:
3. Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի նշված հասցեով՝ ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:
4. Մատակարարված Ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2020թ. դեկտեմբերի 30-ը:

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:39:38 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք.Երևան, Ազատության 26/8
<<Էյչ-Էյ-Բի-Սի Հայաստան Բանկ>> ՓԲԸ
ՀՀ217002182558001
ՀՎՀՀ 01210095
lawyer@c-e.am
հեռ: +374(11)87-87-17
Տնօրեն՝Բ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

SOGHOYAN ANGIN 7209900047

Digitally signed by SOGHOYAN ANGIN 7209900047
DN: c=AM, sn=•••••••, givenName=•••••, serialNumber=aea5c8db7c9, cn=SOGHOYAN ANGIN 7209900047
Date: 2020.09.17 16:24:24 +04'00'

Հավելված N 2
« » 2020թ. կնքված
N«ԳՀԱՊՁԲ-2020/16-20-5-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
12	33691422	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար	-	-	-	-	-	-	-	-	-	17 000,00	17 000,00	17 000,00	17 000,00
15	33691160	Կոլիստինի դիսկ	-	-	-	-	-	-	-	-	-	**6 000,00**	**6 000,00**	**6 000,00**	**6 000,00**
20	33691159	Էլեկսիս Ֆոլեկուլ խթանող հորմոնի քանակական որոշման թեսթ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	116 000,00	116 000,00	116 000,00	116 000,00
21	33691159	Էլեկսիս Տեստոստերոն քանակական որոշման թեսթ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	164 000,00	164 000,00	164 000,00	164 000,00
22	33691162	Էլեկսիս Տեստոստերոն կալիբրատոր	-	-	-	-	-	-	-	-	-	31 490,00	31 490,00	31 490,00	31 490,00
23	33691162	Էլեկսիս պրոլակտին հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	183 000,00	183 000,00	183 000,00	183 000,00
24	33691162	Նեոպլաստին CI Պլուս թեսթ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	84 000,00	84 000,00	84 000,00	84 000,00
25	33691162	ՊՏՏԱ ժամանակի որոշման թեսթ հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	260 000,00	260 000,00	260 000,00	260 000,00
26	33691159	C ռեակտիվ սպիտակուցի LX որոշման թեսթ հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	291 500,00	291 500,00	291 500,00	291 500,00
27	33791300	Կոբաս նմուշի անոթներ	-	-	-	-	-	-	-	-	-	45 710,00	45 710,00	45 710,00	45 710,00
28	33691159	Էլեկսիս էստրադիոլ քանակական որոշման թեսթ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	120 000,00	120 000,00	120 000,00	120 000,00
29	33691162	Էլեկսիս էստրադիոլ կալիբրատոր	-	-	-	-	-	-	-	-	-	31 490,00	31 490,00	31 490,00	31 490,00
30	33691162	Էլեկսիս Ադրենոկորտիկոտրոպ հորմոնի կալիբրատոր	-	-	-	-	-	-	-	-	-	31 490,00	31 490,00	31 490,00	31 490,00
31	33691162	Էլեկսիս կորտիզոլի քանակական	-	-	-	-	-	-	-	-	-	97 450,00	97 450,00	97 450,00	97 450,00

		որոշման թեստ-հավաքածու													
32	33691162	Էլեկսիս կորտիզոլի կալիբրատոր	-	-	-	-	-	-	-	-	-	31 490,00	31 490,00	31 490,00	31 490,00
33	33691162	Էլեկսիս Ֆերիտին քանակական որոշման թեստ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	86 000,00	86 000,00	86 000,00	86 000,00
34	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Thyro Ab-ի	-	-	-	-	-	-	-	-	-	82 000,00	82 000,00	82 000,00	82 000,00
35	33141211	Cobas b 221 անալիզատորի համար սենսորի կոնտակտային էլեկտրոդ	-	-	-	-	-	-	-	-	-	45 000,00	45 000,00	45 000,00	45 000,00
36	33691159	C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեստ կասետ	-	-	-	-	-	-	-	-	-	1 683 880,00	1 683 880,00	1 683 880,00	1 683 880,00
37	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ մուլտիմարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	297 000,00	297 000,00	297 000,00	297 000,00
38	33691162	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված միզաթթվի որոշման թեսթ-կասետ	-	-	-	-	-	-	-	-	-	61 900,00	61 900,00	61 900,00	61 900,00
39	33691159	Էլեկսիս Լյուտինացնող հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	110 000,00	110 000,00	110 000,00	110 000,00
40	33691159	Լիպազայի որոշման թեստ-հավաքածու	-	-	-	-	-	-	-	-	-	263 100,00	263 100,00	263 100,00	263 100,00
76	31151120	Երաշխավորված էլեկտրասնուցման աղբյուր	-	-	-	-	-	-	-	-	-	480 000,00	480 000,00	480 000,00	480 000,00

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված ապրանքների քանակի:*
*** Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
_____
(ստորագրությունը)Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:40:01 AMST

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք.Երևան, Ազատության 26/8
<<Էյչ-Էյ-Բի-Սի Հայաստան Բանկ>> ՓԲԸ
ՀՀ217002182558001
ՀՎՀՀ 01210095
lawyer@c-e.am
հեռ: +374(11)87-87-17
Տնօրեն՝Բ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

SOGHOYAN ANGIN 7209900047

Digitally signed by SOGHOYAN ANGIN 7209900047
DN: c=AM, sn=•••••••, givenName=•••••, serialNumber=aea5c8db7c9, cn=SOGHOYAN ANGIN 7209900047
Date: 2020.09.17 16:25:36 +04'00'

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն